



შეფასებისა და გამომცდების
ეროვნული ცენტრი

Թեստ՝ տարրական աստիճանի ուսուցիչների համար

Բնագիտություն

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից՝ մասնագիտական գիտելիք և ակադեմիական ունակություններ:

Թեստի առավելագույն միավորն է 65:

Ուշադրությամբ ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգին, լավ ըմբռնեք առաջադրանքի պահանջը և դրանից հետո սկսեք աշխատանքը: Թեստի վրա աշխատելիս՝ կիրառեք կցված քարտեզները:

Ի նկատի ունեցեք.

- Եթե ճիշտ պատասխանի հետ միասին նշեք նաև ոչճիշտ պատասխանը, միավոր չեք ստանա:

Թեստի վրա աշխատանքի համար տրվում է 5 ժամ:

Ցանկանում ենք հաջողություն:



➤ *Հարց ընտրովի պատասխաններով՝ առաջադրանք № 1-18; 27-32; 40-46.*

Հրահանգ

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրած պատասխանը ճիշտ նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

➤ *Համապատասխանության որոշում՝ առաջադրանք № 33-37*

Հրահանգ

Որոշեք առաջադրանքում տրված երկու թվարկացանկի միջև եղած համապատասխանությունը: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում: Յուրաքանչյուր տառի տակ գրեք համապատասխան թվանշանը: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 1 :

➤ *Տեղեկատվության վերլուծություն՝ առաջադրանք № 19-26; 38-39.*

Հրահանգ

Ուշադիր ծանոթացեք տրված տեղեկատվությանը (լուսանկար, աղյուսակ, գրաֆիկ և այլն) և պատասխանեք հարցերին: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկում հատկացված համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի:

Մասնագիտական գիտելիք

1. Ո՞ր արհեստիկ (ոչ կենսաձին) գործունն է կարգավորում կենդանի բնության սեզոնային (բույսերի ծաղկում, թռչունների գաղթ, ձմեռային քունը կաթնասունների մոտ և այլն) փոփոխությունները:

(ս) Օրվա տևողությունը

(ծ) Ջերմաստիճանը

(ջ) Խոնավությունը

(Ճ) Օդի բաղադրությունը

2. Ողնաշարավոր կենդանիներից ո՞ր օրգանիզմներին է բնորոշ անուղղակի զարգացումը:

- (ա) Թռչուններին
- (բ) Երկկենցաղներին
- (գ) Սողուններին
- (դ) Կաթնասուններին

3. Ողնաշարավոր կենդանիների ո՞ր դասի ներկայացուցիչներն են շնչում ինչպես մաշկով, այնպես էլ թոքերով:

(ա) Ձկները

(ծ) Երկկենցաղները

(գ) Սողունները

(դ) Թռչունները

4. Ի՞նչն է նպաստում սպիտակ արջին Արկտիկայի միջավայրին հարմարվելու համար:

I –Հաստ,սպիտակ մորթին

II –Ենթամաշկային ճարպային շերտը

III –Արագ լողալու ունակությունը


(a) Միայն I

(b) Միայն II

(c) Միայն I և II

(d) I, II և III

5. Ո՞ր թվանշանով նշված օրգանիզմներին են բնորոշ ներքին բեղմնավորումը և արտաքին զարգացումը:



(ս) 1 և 3


(ծ) 1 և 4

(ճ) 2 և 3

(դ) 3 և 4

6. Վարակիչ հիվանդություն (կարմրուկ) անցկացնելու արդյունքում հիվանդի մոտ մշակվում է իմունիտետ այս հիվանդության նկատմամբ: Բերված կորերից n ըն է համապատասխանում իմունիտետի ձևավորման գործընթացին:

Արյան մեջ հակամարմինների քանակի փոփոխությունը ժամանակում



- (a) A
- (b) B
- (c) C
- (d) D

7. Գերկշիռ ունեցող մարդուն խորհուրդ են տալիս սահմանափակել քաղցրավենիքի ընդունումը, քանզի նրա օրգանիզմում ավելորդ ածխաջրերը հիմնականում.

I - վերափոխվում են ճարպերի

II - վերափոխվում են սպիտակուցների

III - կուտակվում են մկաններում և լյարդում

(a) Միայն I

(b) Միայն II

(c) Միայն III

(d) II և III

8. Գիտնականների ենթադրությամբ, օղակավոր որդերը և միջատները սկիզբ են առնում ընդհանուր նախնիներից: Միջատի զարգացման n° ր փուլն է առավելապես մատնանշում նրա ազգակցական կապը օղակավոր որդերի հետ:


(ա) Նիմֆայի

(ծ) Թրթուրի

(գ) Հարսնյակի

(դ) Հասունի

9. Նկարի վրա պատկերված են ջրում ապրող ողնաշարավոր կենդանիներ: Որոշեք ո՞րն է շնչում ջրում առկա թթվածնով :




(ս) A

(ծ) B

(ճ) C

(դ) D

10. Առաջնորդվեք նկարով և որոշեք ո՞րը չի քաղմանում սերմերով:




(ս) Միայն A

(ծ) Միայն B

(ճ) A և C

(դ) B և D

11. Նկարի վրա մարսողական համակարգի օրգանները նշված են լատինական տառերով: Որոշեք, ո՞ր օրգանում է սկսվում սպիտակուցների մարսումը:



(ս) A

(ծ) B

(ծ) C

(ղ) D

12. Սեղանի վրա դրված է չորս առարկա.

I - 1 գ զանգվածի թղթի թերթիկ

II - 2 գ զանգվածի պղնձե լար

III - 3 գ զանգվածի ալյումինե մեխ

IV - 4 գ զանգվածի երկաթի մեխ

Դրանցից որի՞ն է ավելի հեշտ բարձրացնում մագնիսը:


(ճ) I

(ծ) II

(ժ) III


(ղ) IV

13. Նկարի վրա պատկերված լծակը անգանգված է (զանգված չունի): Դրա վրա նշված է չորս անցք: Դրանցից որո՞վ պետք է կախնել լծակը, որպեսզի այն լինի հավասարակշռության մեջ:




- (ա) 1
- (բ) 2
- (գ) 3
- (դ) 4

14. Նկարի վրա պատկերված է հեղուկով չափանոթ՝ դրա մեջ մինչև մարմին մտցնելը և մտցնելուց հետո, ինչպես նաև նույն մարմինը էլեկտրոնային կշեռքի վրա: Ինչի՞ է հավասար մարմնի խտությունը: Մինչև մարմնի տեղադրումը նժարի վրա կշեռքը հավասարեցրել էին զրոյի:



- (ա) 5 գ/սմ^3
- (բ) $7,6 \text{ գ/սմ}^3$
- (գ) 8 գ/սմ^3
- (դ) $14,4 \text{ գ/սմ}^3$

15. Դիագրամի վրա պատկերված է հավասարաչափ շարժվող չորս մարմնի շարժման ժամանակը և այդ ժամանակում անցած հեռավորությունը: Ո՞ր մարմինն ունի ամենամեծ արագությունը:



- (a) 1
- (b) 2
- (b) 3
- (d) 4

16. Սառնարանի սառնախցիկում չի կարելի դնել ջրով լիքը ապակե անոթ, որովհետև ջուրը սառելիս՝ անոթը կոտրվում է: Ի՞նչն է դրա պատճառը:

(ա) Ջուրը ավելի արագ է սառչում, քան ապակին

(ծ) Ջուրը ավելի ուշ է սառչում, քան ապակին

(ջ) Ջուրը սառչելիս ընդարձակվում է





(դ) Ջուրը սառչելիս կծկվում է

17. Երեք միանման ամանում կշռեցին հավասար ծավալներով A, B և C հեղուկ նյութեր: Արդյունքները տրված են աղյուսակում.

| Դատարկ ամանի զանգվածը | A նյութով լիքը ամանի զանգվածը | B նյութով լիքը ամանի զանգվածը | C նյութով լիքը ամանի զանգվածը |
|-----------------------|-------------------------------|-------------------------------|-------------------------------|
| 25 գ | 75 գ | 72 գ | 65 գ |

Դրանից հետո երեք նյութերն էլ լցրեցին մեկ ամանի մեջ:

Ստորև տրված գծագրերից ո՞րն է ճիշտ արտացոլում ամանում նյութերի տեղաբաշխումը, եթե հայտնի է, որ A նյութը լուծվում է B-ում, իսկ C նյութը չի լուծվում A և B նյութերում:



18. Ստորև թվարկածներից ո՞րն է ճշմարիտ ածխաթթու գազի համար.:

I –ստացվում է ֆոտոսինթեզի արդյունքում

II –ստացվում է կերակրի սոդայի վրա քացախի ազդեցության արդյունքում

III –նպաստում է այրմանը

IV –պղտորում է կրաջուրը

(ս) I և III

(ծ) I և IV

(ճ) II և III

(գ) II և IV

19. Տրված է շաքար պարունակող 4 տարբեր խառնուրդներ.

| Խառնուրդ | Խառնուրդի բաղադրություն |
|----------|--------------------------|
| I | Շաքար և կերակրի աղ |
| II | Շաքար և ավազ |
| III | Շաքար, կերակրի աղ և ավազ |
| IV | Շաքար, կավիճ և ավազ |

Շաքարը առանձնացնելու համար յուրաքանչյուր միացություն լցրեցին ջրի մեջ, մանրակրկիտ խառնեցին և զտեցին: Զտիչով անցած լուծույթը չորացրին:

Ո՞ր խառնուրդից/խառնուրդներից կկարողանան նկարագրված եղանակով մաքուր շաքար ստանալ: Աղյուսակի համապատասխան վանդակում դրեք X նշան:

(Առավելագույն միավոր 1)

| I | II | III | IV |
|---|----|-----|----|
| | | | |

20.Ի՞նչ առավելություն ունի կենդանաճնությունը ձվադրությամբ բազմանալու համեմատ:

(Առավելագույն միավոր 1)

21. Ըստ սննդառության տեսակի կաթնասուններին բաժանում են երեք հիմնական խմբերի. մսակերների, բուսակերների և ամենակերների: Նկարի վրա ներկայացված գանգերը նշված են լատինական տառերով: Ստորև տրված աղյուսակում սննդառության տեսակին գրեք գանգը նշող համապատասխան տառը:




| | |
|----------|--|
| Մսակեր | |
| Բուսակեր | |
| Ամենակեր | |

(Առավելագույն միավոր 1)

22. Բույսերի մոտ պտուղների և սերմերի տարածումն իրականացվում է տարբեր ճանապարհներով է (քամու միջոցով, կենդանիների միջոցով, ինքնատարածմամբ): Ստորև տրված աղյուսակում պտղի տարածման միջոցին գրառեք պտուղը նշող համապատասխան լատինական տառը: Գրառեք բոլոր հնարավոր տարբերակները:

(Առավելագույն միավոր 1)



| | |
|---------------------|--|
| Քամու միջոցով | |
| Կենդանիների միջոցով | |
| Ինքնատարածմամբ | |

23. Բույսի ցողունը թեքեցին և տերևը տեղավորեցին կուլբայի մեջ: Կուլբայի վզիկին բամբակե խցանը այնպես դրեցին, որ բույսը չվնասվեց (տես՝ նկարը): Որոշ ժամանակ հետո կուլբայի պատը գոլորշիացավ և ջրի կաթիլներով պատվեց:


(Առավելագույն միավոր 2)



23.1. (1) Բացատրեք ինչու՞ գոլորշիացավ կուլբայի պատը:


23.2. (1) Ի՞նչ նշանակություն ունի այս գործընթացը բույսի համար:

24. Տրված սննդային շղթայում ո՞ր թվանշանով են նշված II կարգի սպառողները (կոնսումենտները): Չքառեք
քոյոր հնարավոր տարբերակները: (Առավելագույն միավոր 1)



25. Նկարը կիրառելով պատասխանեք հարցերին.

(Առավելագույն միավոր 2)



25.1. (1) Ի՞նչ գործընթաց է պատկերված նկարի վրա:

25.2. (1) Ի՞նչ է սինթեզվում այս գործընթացի արդյունքում:


ճախարարություն-ածխաթթու գազ

ճախարար-ջուր

ջրածին-թթվածին



26. სკარის ქრა თრქად են ანაფაჟინ ჯიქანერ: ანქანერ, n^o რ ე რ კ ი ო ოქასქი რირა რნსნერ ქათაჯაგნქ
 გაქერქ ათაქქე ჯათ რქაქრანასქი ნქაქიომ:

(ათაქქეჯაქიუნ აქაქიორ 1)



*მზის სხივები-არეჯასქი ჯათაჯაქიუნერ
 მარცვლეული-ხათქსაქიუნ
 თავზვი-აქიქ
 ზღარბი-იქნქ
 ციყვი-ასქიქიქ
 სოქო-ათინსქ
 წაბლის ხე-ჯაქანასქენიქი ჯათ*

27. Ո՞րն է համապատասխանում Ֆեռնան Մագելանի ճանապարհորդության ուղուն:




- (ս) A
- (ծ) B
- (ճ) C
- (Յ) D

28. Ի՞նչ է արտացոլված Հաբլի տիեզերական աստղադիտակի միջոցով նկարահանված լուսանկարի վրա:



- (a) Սև խոռոչ
- (b) Գիսաստղ
- (գ) Աստերոիդ
- (դ) Գալակտիկա

29. Ըստ տրված նկարի որոշեք տարվա ո՞ր եղանակն է Վրաստանում:



(ա) Ձմեռ

(բ) Գարուն

(գ) Ամառ

(դ) Աշուն

30. Ո՞ր տարերային երևույթի չափման միավորն է մագնիտուդը:

(ա) Սողանքի

(ბ) Չնահուսի


(գ) Հրաբխի ժայթքման

(դ) Երկրաշարժի

31. Ո՞րն է ճշմարիտ պնդումը:

- (ս) Սև ծովը Դարդանեղի նեղուցով միանում է Մարմարի ծովին
- (ծ) Տորեսի նեղուցը Ավստրալիան բաժանում է Թասմանիայի կղզուց
- (ջ) Պանամայի ջրանցքը Խաղաղ օվկիանոսը միացնում է Ատլանտյան օվկիանոսին
- (ղ) Բալթիկ ծովը ամենախորն է ներմայրցամաքային ծովերի շրջանում

32. Ինչի՞ է հավասար հեռավորությունը A և B զբոսայգիների միջև:



(ա) 2,8 կմ

(ბ) 3,5 կմ

(գ) 4,3 կմ

(դ) 8,0 կմ

33. Սահմանեք համապատասխանություն (նկատի ունեցեք, որ պատասխանի կրկնություն հնարավոր է).









| I Թվարկություն | | | | | |
|-----------------|----------|-----------|-----------|----------|---------|
| Տ | Ծ | Ճ | Ջ | Չ | Յ |
| Շավշեթիի | Թբիլիսիի | Գոմբորիի | Ախալցխեիի | Իորիի | Կոդորիի |
| II Թվարկություն | | | | | |
| 1 | | 2 | | 3 | |
| Գոգահովիտ | | Լեռնաշղթա | | Սարահարթ | |

34. Սահմանեք համապատասխանություն (Նկատի ունեցեք, որ պատասխանի կրկնություն հնարավոր է).

| Բնակավայր | | | | | |
|------------------|-------|---------|---------|-----------|-------|
| Տ | Ծ | Ճ | Զ | Չ | Յ |
| Սուրամի | Տվիշի | Բոլնիսի | Դուշեթի | Խվանճկարա | Չաքվի |
| Բնակավայրի տեսակ | | | | | |
| 1 | | 2 | | 3 | |
| Քաղաք | | Գյուղ | | Ավան | |

35. Սահմանեք համապատասխանություն (Նկատի ունեցեք, որ պատասխանի կրկնություն հնարավոր է).

Արեգակնային համակարգի երկնային մարմնի լուսանկար






| | | | |
|--|---|--|---|
| <p>(ա) Եվրոպա</p>  | <p>(ծ) Վեստա</p>  | <p>(զ) Գալեա</p>  | <p>(դ) Ուրան</p>  |
| <p>(յ) Պլուտոն</p>  | <p>(զ) Լուսին</p>  | <p>(Ֆ) Մարս</p>  | <p>(տ) Սերես</p>  |

Երակնային մարմնի տեսակ

| | | | | |
|---------|--------------------------|---------------|----------|---------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Մոլորակ | Մոլորակի բնական արբանյակ | Գաճաճ մոլորակ | Աստերոիդ | Գիսաստղ |

36. Սահմանեք համապատասխանություն (Նկատի ունեցե՛ք, որ պատասխանի կրկնությունը հնարավոր չէ).





Նկար




Գործընթաց / Երևույթ

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|--------------------------|------------------------|---------------------------------|------------------|-----------------|------|---------|---------------------|--------------------|
| Ցերեկ գիշեր փոփոխություն | Սեզոնների փոփոխություն | Մակընթացություն և տեղատվություն | Արեգակի խավարում | Լուսնի խավարում | Բրիզ | Մուսսոն | Ջրի փոքր շրջապտույտ | Ջրի մեծ շրջապտույտ |

37. Սահմանեք համապատասխանություն (նկատի ունեցեք, որ պատասխանի կրկնությունը հնարավոր չէ).

| Նկար | | | | | |
|-------------------|---|-----|-------|--|-----------|
| Տ |  | | Ծ |  | |
| Ծ |  | | Թ |  | |
| Անվանում | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Հարթավայրային գետ | Լեռնային գետ | Պիկ | Բլուր | Այսբերգ | Սառցադաշտ |

38. (2) **Թվարկածներից, որ առաջադրանքը չեն կարողանա կատարելը աշակերտները տրված տեղանքի հատակագծի միջոցով: Պատասխանը հիմնավորեք:**



- (1) Սակառ գետը Բարուլա գետի աջ, թե՛ ձախ վտակն է:
 - (2) Ի՞նչ հեռավորություն է Կեթի գյուղից մինչև Ախալշեն ավանը:
 - (3) Կեթի գյուղից ի՞նչ ուղղության վրա է գտնվում խառ անտառը:
 - (4) Գյուղատնտեսության ո՞ր ճյուղն է զարգացած Կեթի գյուղում:
- ახალშენი-Ախալշեն, სოფ. გონა-գ. Գონა, სოფ. კეთი-գ. Կեթი, მდ. ბარულა-գետ Բարուլა, მდ. საკაო -գետ Սակառ

39. (6) Վերլուծեք տեղեկատվությունը և պատասխանեք հարցերին.

Ուսուցիչը V դասարանի աշակերտների համար անցկացրեց ամփոփիչ գրավոր թեստավորում, որի նպատակն էր բնության ուսումնական դասընթացով նախատեսված հարցերի գիտելիքների ստուգումը:

Ուսուցչի կողմից պատրաստված ամփոփիչ թեստ.

I. Ի՞նչն է պայմանավորում Երկրագնդի վրա տարվա եղանակների փոխարինումը:

- ա. Երկրագնդի պտույտը երևակայական առանցքի շուրջը, բ. Լուսնի պտույտը Երկրագնդի շուրջը
գ. Երկրագնդի պտույտը Արեգակի շուրջը, դ. Երկրագնդի և Արեգակի փոխաձգողականությունը

II. Ի՞նչն է պայմանավորում օվկիանոսներում և ծովերում ջրի մակընթացությունը և տեղատվությունը:

- ա. Երկրագնդի երևակայական առանցքի թեքությունը ուղեծրի հարթության նկատմամբ
բ. Երկրագնդի մակերևույթի վրա ջրի և ցամաքի հարաբերակցությունը
գ. Երկրագնդի և Լուսնի փոխաձգողականությունը
դ. Երկրագնդի վրա տեղումնային և երաշտային օրերի փոխարինումը

III. Սովորաբար ե՞րբ է օդի ջերմաստիճանը ամենացածրը օրվա ընթացքում:

- ա. Արևածագին; բ. Կեսօրին; գ. Մութն ընկնելիս; դ. Կեսգիշերին.

IV. Քարտեզին տրված աշխարհագրական օբյեկտներից, ո՞րն է գտնվում Թբիլիսիից հարավ-արևմտյան ուղղությամբ

- ա. Մամիսոնի լեռնանցքը, բ. Ժինվալի ջրամբարը, գ. Գ.Դիկլոսմթան, դ. Փարվանա լիճը:

V. Ի՞նչ ուղղությամբ է երեկոյան փչում բրիզ քամին, բացատրեք ինչու՞ է այդպես տեղի ունենում:

VI. Ինչպե՞ս պետք է որոշենք հորիզոնի կողմերը կողմնացույցի միջոցով:

VII. Արեգակնային համակարգի ո՞ր մոլորակների միջև է գտնվում աստերոիդների գոտին:

Անցում. Աշակերտի աշխատանքին, ձեր առաջադրանքի հարցերին:

Ստորև տրված է աշակերտներից մեկի աշխատանքը.

I. ա.

II. գ.

III. դ.

IV. դ.

V. Գիշերային բրիգը փչում է ցամաքից դեպի ծով:

VI. Կողմնացույցի մագնիսացված սլաքով կորոշենք հյուսիսային ուղղությունը և դեմքով կկանգնենք հյուսիսի կողմը, դրա հանդիպակաց կողմը կլինի հարավը, աջը՝ արևմուտքը, իսկ ձախը՝ արևելքը:

VII. Յուպիտերի և Սատուրնի ուղեծիրների միջև գտնվում է աստերոիդների գոտին:

[Անցում. Ուսուցչի կողմից պատրաստված ամփոփիչ թեստին, ձեր առաջադրանքի հարցերին:](#)

Ձեր առաջադրանքի հարցերը.

39.1. (5) Պատասխանների թերթին տրված աղյուսակում X-ով նշեք այն հարցերը, որոնց աշակերտը պատասխանել է թերի կամ սխալ: Ուղղեք աշակերտի սխալները և գրեք լրիվ պատասխաններ (միավոր կվաստակեք միայն այն դեպքում, եթե կգտնեք և ճիշտ կգրեք աշակերտի կողմից սխալ կամ թերի լրացված պատասխանը):

39.2. (1) Համապատասխանեցրեք ուսուցչի կողմից կազմած թեստային առաջադրանքի յուրաքանչյուր հարցին համապատասխան դասի թեման(պատասխանները գրառեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում).

| Ամփոփիչ թեստի հարցի համարը | | Դասի թեման |
|----------------------------|---|--|
| I | 1 | Երկրագնդի շարժումը |
| II | 2 | Արեգակնային համակարգի կառուցվածքը |
| III | 3 | Կողմնորոշում տեղանքում |
| IV | 4 | Ջրի շրջապտույտը բնությունում |
| V | 5 | Քամիներ |
| VI | 6 | Օդի ջերմաստիճան |
| VII | 7 | Ներքին ջրեր |
| | 8 | Հրաբուխներ և երկրաշարժեր |
| | 9 | Մակրնթացության երևույթները համաշխարհային օվկիանոսում |

| I | II | III | IV | V | VI | VII |
|---|----|-----|----|---|----|-----|
| | | | | | | |

Անցում. Ուսուցչու կողմից պատրաստված ամփոփիչ թեստին, աշակերտի աշխատանքը:

Ակադեմիական հատուրթյուններ

Ընթերցած տեքստի ըմբռնում

40-46. (7) Ուշադրությամբ ընթերցեք և ըմբռնեք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրեք այն տարբերակը, որը արդարացված է տրված տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո դրան պատասխանելու համար հնարավոր է ձեզ հարկավոր լինի տեքստին վերադառնալ, համապատասխան հատվածը կրկին կարդալ և նորից անցնել հարցին: Դա կհեշտացնեք եթե «սեղմեք» ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումները:

Ինչու՞ է երեխան վարվում ագրեսիվ: Մի տեսության համաձայն, ագրեսիվ վարքի դրսևորման հավանականությունը մեծանում է այն ժամանակ, երբ երեխաներին չի տրվում սեփական նպատակներին հասնելու հնարավորություն: Հետազոտության ժամանակ փորձաքննությանը մասնակցող երեխաներին երկու խմբով մտցրեցին խաղալիքներով լիքը սենյակ: Առաջին խումբը անմիջապես խաղը սկսելու հնարավորություն ուներ, իսկ երկրորդ խումբը կանգնած էր ապակե պատնեշի առջև և խաղալիքները դիտարկում էր հեռվից: Երկրորդ խմբի երեխաներին խաղալու իրավունք տրվեց երկար ժամանակ սպասելուց հետո: Պարզվեց, որ, ի տարբերություն առաջին խմբի, երկրորդ խմբի երեխաների մեծամասնությունը խաղալիքների նկատմամբ դրսևորեց ագրեսիա: Նրանք ջարդում և նետում էին խաղալիքները: Հետաքրքիր է, ինչու որոշ երեխաներ հուսալքությանը, դիմադրությանը պատասխանում են ագրեսիվ, իսկ որոշ երեխաներ՝ ոչ: Ինչու՞ է երեխան վարվում ագրեսիվորեն նաև այն ժամանակ, երբ հուսալքված չէ: Վերը նշված տեսությունը չկարողացավ այս հարցերին պատասխան տալ, թերևս ստեղծեց ագրեսիայի պատճառների մասին այլ հետազոտություններ անցկացնելու հիմք:

Հաջորդ հետազոտություններում ագրեսիվ վարքը բացատրելիս առանձնահատուկ նշանակություն շնորհվեց դիտարկմանը և ընդօրինակմանը, երեխայի կողմից իրավիճակի ընկալմանը, գնահատմանը: Օրինակ, եթե երեխան տեսնում է, որ իր հասակակիցը ցանկալի նպատակին

Անցում. [Տեքստի երկրորդ էջին](#), [հարց 40-41- ին](#), [հարց 42 - 43-ին](#), [հարց 44 - 45-ին](#), [հարց 46-ին](#):

հասավ ագրեսիվ վարքով, նա էլ կձգտի նույնը կրկնել: Ալբերտ Բանդուրայի հայտնի փորձաքննությունում երեխաների երեք խմբի ցուցադրեցին ֆիլմ տարբեր ավարտով: Ֆիլմում երեխան դաժանորեն հարվածում էր տիկնիկին: Մի խումբը տեսավ, որ երեխային այս ագրեսիայի համար պարզևատրեցին, երկրորդ խումբը տեսավ, որ երեխային ագրեսիայի համար պատժեցին, իսկ երրորդ վարկածում ագրեսիվ վարքին արդյունք չհետևեց, այսինքն՝ երեխային ոչ պատժում և ոչ էլ պարզևատրում են: Ֆիլմը դիտելուց հետո երեխաներին տեղափոխեցին երկրորդ սենյակ, որտեղ նրանց հանդիպեց նույնպիսի տիկնիկ: Պարզվեց, որ տիկնիկի նկատմամբ ագրեսիվ վարք դրսևորեցին բոլոր խմբերի երեխաները, թերևս առավելապես դրսևորեցին նրանք, ովքեր տեսան, որ տիկնիկին ծեծելու համար երեխան պարզևատրվեց, իսկ բոլորից պակաս նրանք, ովքեր տեսան, որ հարձակման համար երեխան պատժվեց:

Ագրեսիվ վարքի պատճառները որոնելիս՝ հետազոտողները հետաքրքրվեցին նաև երեխաների անհատական յուրահատկություններով: Պարզվեց, որ այն երեխաների մոտ, ովքեր հասակակիցների համեմատությամբ ավելի հաճախ են դրսևորում ագրեսիա, նկատվում էին սոցիալական տեղեկատվությունը վերամշակելու բարդություններ: Հնարավոր է, ագրեսիվ երեխան կատարելապես չեզոք, անմեղ սոցիալական ակնարկը գնահատի որպես իր նկատմամբ թշնամական վերաբերմունք (օրինակ, հասակակցի ծիծաղը կարող է ընկալել որպես ծաղրանք): Այս երեխաները միջավայրը կարծում են իրենց նկատմամբ թշնամական տրամադրված, թշնամական վերաբերմունքը ուրիշներին են վերագրում և փոխարենը պատասխանում են ագրեսիայով: Արդյունքում, ագրեսիվ երեխաների համար դժվարանում է հասակակիցների հետ շփումը և, ոչ այնքան հազվադեպ, նրանց վանում են հասակակիցների շրջանից: Այդ պատճառով նրանց սոցիալական փորձը սահմանափակ է, ինչը խոչընդոտում է սոցիալապես ընդունելի նոր վարքերի յուրացմանը: Համապատասխանաբար, ագրեսիվ երեխաների մոտ հարաբերության հիմնախնդիրների այլընտրանքային որոշման ունակությունները ավելի սակավ են զարգացած, այդ պատճառով նրանք դիմում են ագրեսիվ վարքի այս կամ այն ձևին: Իսկ ագրեսիվ վարքով ցանկալիին հասնելու փորձը, իր հերթին, հեշտացնում է վարքի այս ձևի օգտին որոշման ընդունումը:

Անցում. Տեքստի առաջին էջին, [հարց 40-41-ին](#), [հարց 42 - 43-ին](#), [հարց 44 - 45-ին](#), [հարց 46-ին](#):

40. Ստորև տրված են դրույթներ առաջին պարբերության կառուցվածքի մասին: Դրանցից ո՞րն է արդարացված:

- (a) Պարբերության սկզբում առաջադրված է հարց, որին այնտեղ ևեթ ներկայացված պատկերազարդային փորձաքննությամբ տրված է սպառիչ պատասխան: Իսկ պարբերության վերջում առաջադրված հարցերը կասկածի տակ են դնում այս փորձաքննության արդյունքների հավաստիությունը:
- (b) Ներկայացված է մի տեսություն և դրա պատկերազարդային փորձաքննությունը, որը մասամբ պատասխանում է պարբերության սկզբում առաջադրված հարցին: Իսկ պարբերության վերջում առաջադրված են ագրեսիայի բացատրության նոր տեսությունների հրահրող հարցեր:
- (c) Քննարկված է մի տեսություն և դրա պատկերազարդային փորձաքննությունը, որը չկարողացավ պատասխանել պարբերության սկզբում առաջադրված հարցին: Իսկ պարբերության վերջում առաջադրված հարցերը մտածել են տալիս ագրեսիայի իսկական պատճառների մասին:
- (d) Ներկայացված է փորձաքննություն, որը ագրեսիայի պատճառների մասին հաղորդում է տեղեկատվություն և, համապատասխանաբար, արձագանքում է պարբերության սկզբում առաջադրված հարցին: Թերևս պարբերության վերջում ծագած հարցերը արմատապես փոխում են հետազոտության նպատակը:

41. Առաջին պարբերությունում նկարագրված փորձաքննության մեջ երկրորդ խմբի երեխաներին երկար ժամանակ սպասեցրին, մինչև նրանց խաղի իրավունք տվեցին: Ստորև թվարկածներից ո՞րն է առավել ճշգրտությամբ նկարագրում, թե ինչն էր դրա նպատակը:

- (a) Երեխաների կողմից խաղի գործընթացի ուշացումով դիտարկումը:
- (b) Երկրորդ խմբի երեխաների հույզերը վարելու ունակության գնահատումը:
- (c) Նրանց մոտ ցանկալիին չհասնելով պայմանավորված հուզական վիճակի առաջացումը:
- (d) Երեխաների երկու խմբերի խաղի յուրահաստկությունների փոխհամեմատությունը:

Անցում. Տեքստի առաջին էջին, Տեքստի երկրորդ էջին:

42. Ստորև թվարկածներից ո՞ր եզրահանգումը կատարելու հնարավորություն է տալիս երկրորդ պարբերությունում ներկայացված փորձաքննության արդյունքը (տիկնիկի նկատմամբ ագրեսիվ վարք առավելապես դրսևորեցին այն խմբի երեխաները, ովքեր տեսան, որ տիկնիկին ծեծելու համար երեխան պարզևատրվեց):

Ագրեսիվ վարքը սերտելիս, կարևոր է.

- (Տ) Երեխայի կողմից իրավիճակի գնահատումը – այն բանի ըմբռնումը՝ ագրեսիվ վարքին կհետևի, թե ոչ՝ ցանկալի արդյունք:
- (Ծ) Հասակակիցների վարքի դիտարկումը և նման իրավիճակում նույն վարքի կրկնման ունակությունը:
- (Ճ) Ագրեսիայի օբյեկտից (այս դեպքում տիկնիկից) պատասխան ագրեսիա չսպասելը:
- (Թ) Ագրեսիայի օբյեկտը (այս դեպքում տիկնիկը) լինի նույնը՝ երեխան ագրեսիա դրսևորում է նրա նկատմամբ, ում նկատմամբ ագրեսիա են ցուցաբերում ուրիշները:

43. **II պարբերության հիման վրա կարելի է եզրակացնել, որ ագրեսիան նվազեցնելու համար երեխայի ֆիզիկական պատիժը.**

- (Տ) Նույնական մեթոդ է, քանզի պատիժը, ընդհանուր առմամբ, նվազեցնում է այն բանի հավանականությունը, որ երեխան ապագայում կրկնի այն վարքը, որի համար պատժվել է:
- (Ծ) Նույնական մեթոդ չէ, քանզի ֆիզիկական պատժով երեխային առաջարկում ենք ագրեսիվ վարքի օրինակ, որը նա կարող է հետագայում ընդօրինակել:
- (Ճ) Նույնական մեթոդ է, քանզի փորձաքննությանը մասնակցող երեք խմբի երեխաներին սերտել տվեցին ագրեսիվ վարքը ընդօրինակման ճանապարհով:
- (Թ) Նույնական մեթոդ չէ, քանզի ֆիզիկական պատիժը միայն ժամանակավոր է ընկճում ագրեսիվ վարքը, համապատասխանաբար, դրա էֆֆեկտը կայուն չի կարող լինել:

Անցում. Տեքստի առաջին էջին, Տեքստի երկրորդ էջին:

44. Ի՞նչ հարաբերակցություն է առաջին և երկրորդ պարբերություններում ներկայացված փորձաքննությունների միջև:

- (Տ) Երկու փորձաքննությունների նպատակը ագրեսիայի պատճառների պարզաբանումն էր, թերևս միայն երկրորդ փորձաքննությունը հայտնվեց հաջողակ:
- (Ծ) Առաջին փորձաքննության արդյունքները հաստատեցին հիպոթեզը ագրեսիայի պատճառի մասին, իսկ երկրորդ դեպքում հիպոթեզը չհաստատվեց:
- (Ձ) Երկու փորձաքննություններում էլ նման ճանապարհով փորձեցին ագրեսիա առաջացնել, թերևս տարբեր արդյունք ստացան:
- (Թ) Երկու փորձաքննության նպատակն էր ագրեսիայի պատճառների պարզաբանումը, թերևս տարբեր տեսական մոտեցման շրջանակներում:

45. Ստորև տված յուրաքանչյուր պատասխանում ներկայացված է հասակակիցների շրջանում ագրեսիվ վարքով աչքի ընկած երեխաների երկու առանձնահատկություն: Ո՞ր պատասխանում չի տրված առանձնահատկությունների միջև պատճառա-հետևանքային կապը (I. Պատճառ, II. հետևանք):

- (Տ) I. Նկատվում են սոցիալական տեղեկատվության վերամշակման բարդություններ, II. Շրջապատողների սոցիալական ակնարկները ոչճիշտ են գնահատում:
- (Ծ) I. Վտարված են հասակակիցների շրջանից, II. Չունեն նոր, սոցիալապես ընդունելի վարքի ձևեր յուրացնելու կարողություն:
- (Ձ) I. Միջավայրը կարծում են իրենց նկատմամբ թշնամաբար տրամադրված, II. Ունեն ագրեսիվ վարքով ցանկալիին հասնելու փորձ:
- (Թ) I. Թույլ են զարգացած հարաբերությունը ոչագրեսիվ ճանապարհով կարգավորելու ունակությունները, II. Դժվարանում է հասակակիցների հետ շփումը:

Անցում. [Տեքստի առաջին էջին](#), [Տեքստի երկրորդ էջին](#):

46. Տեքստի վերջին նախադասության հիման վրա պետք է եզրակացնեք, որ

- (Տ) Եթե մեր նպատակն է նվազեցնել երեխայի ագրեսիան, չպետք է նրան տանք վարքի այս ձևի միջոցով ցանկալի արդյունքի հասնելու հնարավորություն:
- (Ծ) Որքան ավելի հաճախ է երեխան ագրեսիվ վարքով հասնում ցանկալի նպատակին, այնքան ավելի համոզված է սեփական որոշման ճշմարտացիության մեջ:
- (Զ) Որքան ավելի հաճախ է երեխան դիմում ագրեսիվ վարքի, այնքան ավելի հաճախ է հասնում ցանկալի նպատակին:
- (Գ) Եթե մեր նպատակն է նվազեցնել երեխայի ագրեսիան, շրջապատում գտնվողները ավելի բարյացակամություն պետք է դրսևորեն նրա նկատմամբ:

Անցում. Տեքստի առաջին էջին, Տեքստի երկրորդ էջին:

Վերլուծական գրություն

47. (11) 1978 թվականին Աստրիդ Լինդգրենսին տրվեց «Խաղաղության մրցանակ»: Գրողը խոսք ասաց: Առաջարկում ենք Աստրիդ Լինդգրենսի ելույթից մի քանի քաղվածք.

«Առաջադեմ մարդկությունն իր գոյության առաջին իսկ օրվանից պայքարում է և պատերազմում: Մի գուցե հարցնենք ինքներս մեզ, մենք անձամբ ամեն օր հո՞ չենք անում այնպիսի բան, ինչը տանում է դեպի մշտական հակամարտություններ:

...Մեկ անգամ մի երեցկին ասաց, երբ երեխա ունեցա, ծեծի բարիքին չէի հավատում, չնայած այն բանին, որ այն ժամանակ պատժելու նպատակով երեխաներին «ծեծելը» տարածված մեթոդ էր: Սակայն հետո, երբ երեխան 4 թե 5 տարեկան դարձավ, ինչ-որ այնպիսի բան է կատարում, որ երեցկինը որոշում է երեխային «ծեծել»: Երեխային ուղարկում է բակ՝ անձամբ ճիպոտ բերելու: Ուշացումով վերադարձած արտասվող տղան մորը քար է տալիս և ասում է. «Ճիպոտ չգտա և կարող ես այս քարը նետել ինձ վրա»: Մայրը տղայի բերած քարը դնում է խոհանոցի դարակի վրա, որպես այն բանի մշտական հիշեցում, որ բռնությունը ելք չէ:

... Եթե երեխաներին պատժելը դադարեցնեք, գուրգուրեք և սրտին սեղմեք, բոլորը մեկ անգամից կազնվանա՞ն: Բոլոր պատերազմները կդադարե՞ն: Իհարկե, ոչ: Այսպիսի ցնորքի միայն մանկագիրները կարող են հավատալ:

... Մեզանից ոչ մեկին չէր վիրավորի քարը խոհանոցի դարակին»:

- **Ղատեցեք, ինչպես է արձագանքում հասարակությունը (ընտանիք, դպրոց, թեմ...) երեխայի կողմից դրսևորած ոչցանկալի վարքին, ինչ հետևանքներ է բերում արձագանքի այս կամ այն ձևը,**
- **Ինչպիսին պետք է լինի հասարակության արձագանքը երեխայի ոչցանկալի վարքին:**

Դատողությունն ամրապնդելու համար բերեք փաստարկներ և օրինակներ: Ձեր կողմից գրված պատմությունը պետք է ընդգրկի, առնվազն, 100 բառ: